

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-2**

ք. Երևան

«24» «05» 2024 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՕԼԻՄՊ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ի.Աղաբաբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:



3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա

Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովի Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 117 945 600 (մեկ հարյուր տասնյոթ միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է):

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է:

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ:

ՎԳ -ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:



6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պարասխանավորությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:



Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 30 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900032313174
ՀՀ ՀՀ 02593108

Վ. Պապիկյան

(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Օլիմպ Շին» ՍՊԸ
ք. Երևան Այգեստան 10 փ. 5տ
«Ակբա բանկ»ԲԲԸ
ՀՀ 220553339551000
ՀՀ ՀՀ 02836713

Ի. Աղաբաբյան

(ստորագրություն)

Կ.Տ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում, ընդ որում՝	Տեխնիկական բնութագիր	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Կատարման ժամկետ է համարվում սույն աշխատանքների պայմանագիրը և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների կատարման համար սահմանվում է չափաբաժիններում նշված օրը ներառյալ
2	45611300/85	Վաղարշյան 1 և 3 շենքերի բակ	Գնման առարկա է հանդիսանում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի շենքերի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները Աշխատանքները պետք է իրականացվեն աշխատանքների ծավալաթերթով նախատեսված ծավալներին և ձևին համապատասխան:	29107200	Մինչև 130 օրացուցային օր
3	45611300/86	Կոմիտաս 22 շենքի բակ	1. Ընթացակարգին մասնակից կազմակերպությունը գնի առաջարկը սահմանելու նպատակով իրավունք ունի նախորոք այցելելու շին հրապարակ: 2. Վերանորոգման աշխատանքները պետք է սկսվեն պայմանագրի հաստատման պահից 2/ երկու / աշխատանքային օրվա ընթացքում: 3. Աշխատանքները իրականացնող բանվորները պետք է ունենան համապատասխան աշխատանքային փորձ, իսկ աշխատանքները իրականացնելու ժամանակ պետք է կրեն հատուկ աշխատանքային վերնազգեստ, պահպանելով անվտանգության կանոնները: Շին հրապարակը պետք է առանձնացվի հատուկ պարսպով. 4. Աշխատանքները կատարել երեք փուլերով՝	35904000	Մինչև 130 օրացուցային օր
4	45611300/87	Մամիկոնյանց 62 շենքի բակ	2. Վերանորոգման աշխատանքները պետք է սկսվեն պայմանագրի հաստատման պահից 2/ երկու / աշխատանքային օրվա ընթացքում: 3. Աշխատանքները իրականացնող բանվորները պետք է ունենան համապատասխան աշխատանքային փորձ, իսկ աշխատանքները իրականացնելու ժամանակ պետք է կրեն հատուկ աշխատանքային վերնազգեստ, պահպանելով անվտանգության կանոնները: Շին հրապարակը պետք է առանձնացվի հատուկ պարսպով. 4. Աշխատանքները կատարել երեք փուլերով՝	52934400	Մինչև 130 օրացուցային օր



		ա/ առաջին փուլում կատարել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 50 օրացուցային օրում պայմանագրային ամբողջ ծավալի առնվազն 30%-ը բ/ երկրորդ փուլում կատարել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 100 օրացուցային օրում պայմանագրային ամբողջ ծավալի առնվազն 80%-ը գ/ երրորդ ավարտական փուլում միջև պայմանագրի վերջնաժամկետը կատարել մնացած աշխատանքները 100%-ով:	
--	--	---	--

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

2-րդ չափաբաժին

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Վաղարշյան 1 և 3 շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքների

NN	NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	Ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6	7
Շիկնարարական աշխատանքներ						
Քանդման աշխատանքներ						
1	P25-18 K=0,6 K=0,7 կիրառ	Մետաղական ավտոտնակների ապամոնտաժում 4հատ	տն	6.000	64.358	386.15
2	27-36	Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում 150x300մմ, բետոնե հիմքով	զմ	50.200	1.329	66.71
3	27-36	Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում 150x300մմ, բետոնե հիմքով	զմ	76.230	1.329	101.30
4	P9-26	Մետաղական բազրիքի ապամոնտաժում H=900մմ	զմ	69.400	0.705	48.91
5	46-132	Սալահատակի քանդում	մ2	3.500	6.131	21.46
6	E27-33	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում 1720մ2	մ3	86.000	5.377	462.46
7	E27-31	Խճի շերտի քանդում 1720մ2	մ3	172.000	0.671	115.41
8	E46-99	Գույուլթյուն ունեցող աստիճանների քանդում	մ3	1.000	22.442	22.44
9	P9-26	Մետաղական ճաղաշարի ապամոնտաժում	զմ	24.000	0.705	16.91
10	P19-2 կիրառ	d=50մմ մետաղական խողովակաշարի ապամոնտաժում	զմ	4.400	0.883	3.89
11	7-668 K=0,6 կիրառ	Նստարանների ապամոնտաժում	հատ	5.000	1.356	6.78



12	7-668 K=0,6 կիրառ	Խաղերի ապամոնտաժում	հատ	2.000	1.356	2.71
13	P25-18 K=0,6 k=0,7 կիրառ	Մեքենայի ապամոնտաժում 1հատ	տն	1.200	64.358	77.23
14	E1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	24.100	3.322	80.06
15	C310-13 տ.մ.կ29	Շին աղբի, բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ /այդ թվում տեղում առկա շին աղբ- 40մ3/	տն	606.994	4.518	2742.10
		Ընդամենը	14.09	%		4154.51
Բարեկարգման աշխատանքներ						
16	E15-70	Գոյություն ունեցող հենապատի բազալտե թասակի տեղադրում 5սմ հաստությամբ 30սմ լայնությամբ 7.7զմ	մ2	2.241	48.861	109.50
17	E15-2 E15-58	Գոյություն ունեցող հենապատի պատերի երեսպատում 30սմ հաստությամբ բազալտե սալերով, սալերի խարսխումով H=300սմ	մ2	7.500	37.885	284.14
18	E15-70	Բազալտե թասակի տեղադրում 5սմ հաստությամբ 40սմ լայնությամբ 12.5զմ	մ2	5.000	48.861	244.31
19	E15-2 E15-58	Գոյություն ունեցող հենապատի պատերի երեսպատում 30սմ հաստությամբ բազալտե սալերով, սալերի խարսխումով H=600սմ	մ2	13.700	37.885	519.03
20	E15-70	Բազալտե թասակի տեղադրում 5սմ հաստությամբ 40սմ լայնությամբ 17.2զմ	մ2	6.880	48.861	336.16
21	E6-90	Հենապատերի պատրաստում B-15 դասի բետոնից /գոյություն ունեցող պատի բարձրացում 20սմ/	մ3	0.090	58.725	5.29
22	E15-2 E15-58	Պատերի երեսպատում 30սմ հաստությամբ բազալտե սալերով, սալերի խարսխումով	մ2	1.600	37.885	60.62
23	E15-70	Բազալտե թասակի տեղադրում 5սմ հաստությամբ 40սմ լայնությամբ 2զմ	մ2	0.800	48.861	39.09
24	E15-70	Գոյություն ունեցող հենապատի բազալտե թասակի տեղադրում 5սմ հաստությամբ 60սմ լայնությամբ 65.5զմ	մ2	39.300	48.861	1920.24
25	8-11	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ3	1.141	9.455	10.79




26	27-87	Բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 80x200սմ	զմ	114.100	6.471	738.36
27	8-11	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ3	2.940	9.455	27.80
28	27-86	Բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 150x300սմ	զմ	147.000	12.836	1886.93
29	E27- 173	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	մ2	1600.00	1.719	2750.39
30	E27- 169 E27- 172	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ	մ2	1600.000	5.304	8486.05
31	11-6	Խճի շերտի պատրաստում 10սմ հաստությամբ (լցնովի ռետինե հատակի տակ)	մ3	3.650	16.657	60.80
32	E6-16	Միաձույլ ե/բ հատակի պատրաստում B- 15 դասի բետոնից (լցնովի ռետինե հատակի տակ)	մ3	3.650	50.761	185.28
33	Շուկա	Ամրանի արժեքը 10սմ A500c դասի	տն	0.365	439.255	160.33
34	E11- 201 կիրառ	Լցնովի ռետինե հատակի իրականացում 1.5սմ հաստությամբ (ռեզինե փշրանքներ)	մ2	36.500	29.720	1084.79
35	11-6	Խճի շերտի պատրաստում 10սմ հաստությամբ /բետ սալիկների տակ/	մ3	9.000	16.657	149.91
36	E23-1	Ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ 5սմ հաստությամբ	մ3	4.500	15.756	70.90
37	27-175	Բետոնե դեկորատիվ սալիկների տեղադրում (старый город)	մ2	90.00	10.106	909.52
38	E1- 1592	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	մ3	18.000	2.823	50.81
39	C310- 35	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	21.600	7.354	158.86
40	E48- 168	Բուսահողի փռում ձեռքով	մ2	180.00	0.553	99.48
41	E48- 214	Սերմի ցանում	մ2	180.00	0.220	39.51
42	7-668 կիրառ	Ցայտադրվողի տեղադրում	կ-տ	1.000	120.718	120.72
43	Շուկա	Մետաղական ցանց խիտ H=200mm, 1.7զմ	մ2	3.400	4.726	16.07
44	E6-15	B-15 դասի բետոնից աստիճանների պատրաստում	մ3	0.500	47.948	23.97
45	E15-77	Աստիճանների և աստիճանատակերի երեսպատում 30սմ հաստությամբ բազալտե սալերով	մ2	2.200	22.815	50.19



46	E6-14	B-12.5 դասի բետոնով բուտաբետոնե գանգվածի պատրաստում	մ3	3.800	51.020	193.87
47	E6-16	Միաձուլվել է/թեքահարթակի պատրաստում B-15 դասի բետոնից	մ3	0.650	50.761	32.99
48	Շուկա	Ամրանի արժեքը 10մմ A500c դասի	տն	0.055	439.255	24.16
49	E11-221	Թեքահարթակի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով	մ2	7.300	15.311	111.77
50	E15-77	Աստիճանների և աստիճանատակերի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով /հոյություն ունեցող աստիճաններ/	մ2	3.200	22.815	73.01
51	E11-221	Հարթակի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով	մ2	11.800	15.311	180.67
52	7-668 կիրառ	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	6.000	11.280	67.68
53	7-668 կիրառ	Աբղամանների տեղադրում ամրացումով	հատ	4.000	7.517	30.07
54	Շուկա	Խաղասարքերի տեղադրում ամրացումով (խաղասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	83.124	83.12
55	Շուկա	Խաղասարքերի տեղադրում ամրացումով (խաղասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	71.486	71.49
		Ընդամենը	72.83	%		21468.64
Էլեկտրալուսավորություն /3հատ/						
56	E1-966	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	2.400	11.114	26.67
57	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ3	0.038	1.389	0.05
58	E6-1	B-7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտի պատրաստում	մ3	0.024	39.987	0.96
59	E6-5	Միաձուլվել է/բ կետային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ3	0.900	69.057	62.15
60	Շուկա	Ամրանի արժեքը 10մմ A500c դասի	տն	0.012	439.255	5.27
61	E6-82	Պողպատե պատյանի տեղադրում 133x4մմ խողովակներից	տն	0.026	129.319	3.42
62	Շուկա	133x4մմ պողպատե խողովակի արժեքը	գմ	2.100	7.453	15.65

63	E6-83	Պողպատե թիթեղի տեղադրում 8մմ	տն	0.008	1266.275	9.50
64	33-621	Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	3.000	15.354	46.06
65	Շուկա	108x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	15.600	5.549	86.57
66	Շուկա	42x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	8.400	2.284	19.19
67	15-614	Մետաղական մասերի 2 շերտ ներկում	մ2	6.398	1.650	10.56
68	8-594-1	Լուսադիոդային լամպ 50Վտ 7433լմ 6000L IP65	հատ	6	15.481	92.88
69	Շուկա	Տուփ ճյուղավորիչ 150x150	հատ	3.000	2.196	6.59
70	8-525-1	Ավտոմատ անջատիչ երկմեռ 10Ա	հատ	3	4.805	14.42
71	8-141-1	Մալուխի անցկացում ալյումինե ABBF - 4x16մմ2	գմ	150.000	0.992	148.75
72	8-141-1	Մալուխի անցկացում ալյումինե ABBF - 4x10մմ2	գմ	90.000	0.708	63.71
73	8-141-1	Մալուխի անցկացում ալյումինե ABBF - 3x3.2մմ2	գմ	78.000	0.499	38.91
74	8-417-11	Խողովակ պոլիէթիլենային Φ 50	գմ	82.000	0.972	79.74
75	8-417-10	Ճկախողովակ պոլիէթիլենային Φ 32	գմ	9.000	0.672	6.05
76	E1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	15.375	3.322	51.08
77	E23-1	Ավագե նախապատրաստական շերտի պատրաստում	մ3	4.500	5.909	26.59
78	E1-968	Բնահողի ետիցք ձեռքով, տոփանումով	մ3	10.950	1.389	15.21
79	C310-13 տ.մ.կ29	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	8.186	4.518	36.98
80	8-156-5	Մալուխի չոր հարդարում	հատ	6.000	1.208	7.25
		Ընդամենը	2.97 %			874.21
Մետաղական բազրիք H=0,94մ 45գմ						
81	E1-965	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	2.419	6.191	14.98
82	E1-968	Բնահողի ետիցք ձեռքով	մ3	1.065	1.389	1.48
83	C310-13 տ.մ.կ29	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	2.574	4.518	11.63
84	8-11	Խճի շերտի պատրաստում	մ3	0.968	9.455	9.15
85	E6-2	Կետային հիմքերի պատրաստում				
86	E6-82	պատրաստում B-12,5 դասի բետոնից	մ3	0.387	62.169	24.07
		Թերթապողպատի տեղադրում	տն	0.0570	1015.964	57.89
87	E7-735	Մետաղական բազրիքի պատրաստում և տեղադրում մետաղական էլեմենտներից	գմ	45.000	3.605	162.24
88	Շուկա	60x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	31.45	1.567	49.27



89	Շուկա	40x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	43.55	1.259	54.84
90	Շուկա	40x20x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	136.94	0.952	130.32
91	15-614	Մետաղական մասերի 2 շերտ ներկում	մ2	29.690	1.650	48.99
		Ընդամենը	1.92	%		564.86
Մետաղական ճաղաշար H=1.1մ 65գմ						
92	E1-965	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	3.095	6.191	19.16
93	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ3	1.950	1.389	2.71
94	C310-13 տ.մ.կ29	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	2.176	4.518	9.83
95	8-11	Խճի շերտի պատրաստում	մ3	0.402	9.455	3.80
96	E6-2	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ3	0.743	64.753	48.10
97	E6-82	Թերթապողպատի տեղադրում	տն	0.0187	1015.964	18.96
98	E7-735	Մետաղական բազրիքի պատրաստում և տեղադրում մետաղական էլեմենտներից	գմ	65.000	3.605	234.35
99	Շուկա	40x40x2.5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	78.62	1.578	124.09
100	Շուկա	40x30x2.5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	130.00	1.328	172.64
101	Շուկա	20x20x1.5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	321.90	0.527	169.68
102	15-614	Մետաղական մասերի 2 շերտ ներկում	մ2	56.531	1.650	93.28
		Ընդամենը	3.04	%		896.61
		Ընդամենը				27958.83
		Սարքավորումներ	5.15358	%		1265.98
1	7-668 կիրառ	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	6.000	45.000	270.00
2	7-668 կիրառ	Աբղամանների տեղադրում ամրացումով	հատ	4.000	23.000	92.00
3	Շուկա	Խաղասարքերի տեղադրում ամրացումով (խաղասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	486.009	486.01
4	Շուկա	Խաղասարքերի տեղադրում ամրացումով (խաղասարքերի տեսակները և գնառաջարկները ներկայացված է թաղապետարանի կողմից)	կ-տ	1.000	417.968	417.97



	Ընդամենը				29224.81
	ԱԱՀ	20%			5844.96
	Ընդամենը				35069.77

3-րդ չափաբաժին
Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտաս 22 շենքի բակի հիմնանորոգման
աշխատանքների

Ճավալաթերթ-Նախահաշիվ						
NN	NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6	7
Շիանարարական աշխատանքներ						
Քանդման աշխատանքներ						
1	P25-18 K=0,6 K=0,7 կիրառ	Մետաղական ավտոտնակների ապամոնտաժում 3հատ	տն	4.500	64.358	289.61
2	27-36	Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում 150x300մմ, բետոնե հիմքով	գմ	225.000	1.329	298.98
3	P9-26	Մետաղական բազրիքի ապամոնտաժում H=900մմ	գմ	203.000	0.705	143.06
4	P9-26	Մետաղական ճաղաշարի ապամոնտաժում H=2000մմ	գմ	17.600	0.705	12.40
5	27-30	Բետոնե դեկորատիվ սալիկների ապամոնտաժում 9.5մ2	մ3	0.475	2.767	1.31
6	P25-17 K=0,6 K=0,7 կիրառ	Տաղավարի ապամոնտաժում 2հատ	տն	0.950	52.334	49.72
7	E27-33	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում 1350մ2	մ3	67.500	5.377	362.98
8	E27-31	Խճի շերտի քանդում 1350մ2	մ3	135.000	0.671	90.58
9	7-668 K=0,6 կիրառ	Բաստետբոլի շիթի ապամոնտաժում	հատ	2.000	1.356	2.71
10	7-668 K=0,6 կիրառ	Նստարանների ապամոնտաժում	հատ	7.000	1.356	9.49
11	7-668 K=0,6 կիրառ	Խաղերի ապամոնտաժում	հատ	2.000	1.356	2.71
12	E46-79	Գոյություն ունեցող պատի քանդում	մ3	13.100	17.189	225.18



13	P19-2 կիրառ	Գոյություն ունեցող ոռոգման խողովակաշարի ապամոնտաժում	գմ	190.000	0.883	167.80
14	E1- 1609 E1- 1616	3-րդ կարգի բնահողի մշակում բուլղոզերով 53մ2, 10սմ	մ3	5.300	0.334	1.77
15	7-668 K=0,6 կիրառ	Աղբամանների ապամոնտաժում	հատ	1.000	1.356	1.36
16	7-668 K=0,6 կիրառ	Գոյություն ունեցող ցայտաղբյուրի քարի ապամոնտաժում	հատ	1.000	1.356	1.36
